ՀՀ Լոռու մարզի մարզպետ Արամ Խաչատրյանին

ՀՀ քաղաքացի Դիանա Բարսեղյանից

Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Վրացական 4-րդ նրբ., շ. 5, բն. 18

06 փետրվարի 2021թ.

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Խաչատրյան,

Համաձայն ՀՀ Կառավարության 8 նոյեմբերի 2012 թվ. N 1617-Ն որոշման 5-րդ կետի՝ իրավաբանական անձ գրանցելիս ֆիրմային անվանման տարբերակող տարրում ՀՀ մարզերից մեկի անվան օգտագործումը պահանջում է մարզպետի թույլտվությունը:

Նույն որոշմամբ սահմանվում է նաև ֆիրմային անվանման հայտի ներկայացման կարգը, որին կցվում է ընթացիկ տարվա համար տեղական կամ պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ, 51-րդ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներով՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն՝ որքա՞ն է կազմում ընթացիկ տարվա համար տեղական կամ պետական տուրքի չափը և ո՞ր իրավական ակտով է այն սահմանվում:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիանա Բարսեղյան

ստորագրություն